ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30

էլ.փոստ՝ khoy.community@gmail.com

ՀԱՆՐՕԳՈՒՏ ԾՐԱԳԻՐ
2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՏՈՒՆ ԳՅՈՒՂԻ Ռ"ԱՎԱԳՅԱՆ 11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ

Ծրագրի նկարագրությունը

Ծրագրով նախատեսվում է Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Ռ.Ավագյան 11/1 հասցեում գտնվող մանկապարտեզի շենքի վերանորոգում և մանկապարտեզի վերաբացում: Մանկապարտեզի շենքը կառուցվել է 2021 թվականին, համայնքի բարերար Վահան Ավագյանի կողմից, սակայն ավարտին չի հասցվել:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի 150 երեխա հնարավորություն կունենա սեփական համայնքում ստանալ նախադպրոցական կրթություն : Ծրագիրը համայնքում կբարելավի մատուցվող նախադպրոցական կրության որակն ու հասանելիությունը : Համայնքում կստեղծվեն նոր աշխատատեղեր ՝ 15 ժամանակավոր, 23 մշտական :

Ծրագրի նպատակ

Համայնքում ապահովել որակյալ նախադպրոցական կրթության ծառայությունների մատուցումը, ինչպես նաև բարելավել համայնքի սոցիալ տնտեսակն վիճակը ՝ համայնքում նվազեցնելով գործազրկության մակարդակը :

Ծրագրի խնդիրները

Ծրագրի հիմնական խնդիրն համայնքում նախադպրոցական կրթության ապահովումն է՝

1) երեխաների ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը

2) մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը

3) հաշվետու տարրական կարողությունների զարգացումը

4) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը

5) հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացում ձևավորելը

6) աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը

Խոյ համայնքի բնակչության թիվն ու սեռատարիքային կազմը

Խոյ համայնքի բնակչության թիվն ու սեռատարիքային կազմ :

Հ/Հ	Համայնքի անվանումը	Բնակչության թիվը	Արական	Իգական	Տարիքային խումբ				
					0-3տ	3-6տ	7-17տ	18-63տ	63-ից բարձր
1	Խոյ	31034	15122	15912	1239	1165	4272	21267	3091

Աղավնատուն բնակավայրի բնակչության թիվն ու սեռատարիքային կազմ

Հ/Հ	Բնակավայրի անվանումը	Բնակչության թիվը	Արական	Իգական	Տարիքային խումբ				
					0-3տ	3-6տ	7-17տ	18-63տ	63-ից բարձր
1	Աղավնատուն	3205	1564	1641	168	185	476	2093	283

Ներդրումային ծախսեր

Մանկապարտեզի շենքի վերանորոգումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության համայնքների 2023 թվականի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրով: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 311 724 000 / երեք հարյուր տասնմեկ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար / ՀՀ դրամ , որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 95 797 200 / ինսունհինգ միլիոն յոթ հարյուր ինսունյոթ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ :

Հ/հ	Ծրագրի անունը	Ծրագրի արժեքը ՀՀ դրամ	Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը ՀՀ դրամ
1	Աղավնատուն բնակավայրի մանկապարտեզի հիմնանորոգում	**311724000**	**95797200**

Մանկապարտեզի շենքի վերանորոգման ծրագրի ծախսերը ամփոփ ներկայացված են աշխատանքների նախահաշվային փաստաթղթում : / Հավելված 1/

Իսկ ծրագրով նախատեսվող աշխատանքները մանրամասն ներկայացված են աշխատանքային նախագիծ փաստաթղթում : /Հավելված 2 /

Նշենք, որ համայնքը վերանորոգման աշխատանքները կսկսի միայն գույքը համապատասխան ընթացակարգով նվիրաբերություն ստանալուց հետո :

Խոյի համայնքապետարանը պարտավորվում է ապահովել առաջիկա հինգ տարիների ընթացքում մանկապարտեզի բնականոն կենսունակությունն ու շահագործումը :

Ներդրումային ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 311 724 000 / երեք հարյուր տասնմեկ միլիոն յոթ հարյուր քսանչորս հազար / ՀՀ դրամ , որից համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը կազմում է 95 797 200 / ինսունհինգ միլիոն յոթ հարյուր ինսունյոթ հազար երկու հարյուր / ՀՀ դրամ :

Համայնքապետարանը նախատեսում է մանկապարտեզի գույքի ձեռքբերում 2024 թվականի սուբվենցիոն ծրագրով, որի արժեքը գործընթացը համապատասխան ընթացակարգով մեկնարկելուց հետո առանձին տեղեկանքով կներկայացվի:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

Կատ՝ Արտաքին կապերի, զարգացման ծրագրերի
Տուրիզմի, սպասարկման և գովազդի բաժնի
պետ՝ Ա.Սարգսյան /հեռ.060888999 (97)/